

IX ԴԱՐԱՍԿՁԲԻ ԱՐՇԱՐՈՒՆԻՔԻ ՏԵՐԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

ՄԱՐԻԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայաստանում VIII դարի երկրորդ կեսին քաղաքական պատկերը բարդ և խճճված էր: Արձնիի 775 թ. ճակատամարտից հետո փոխվեց երկրում տիրող իրավիճակը, իսկ քաղաքական դեպքերի զարգացումը բոլորովին այլ ուղով ընթացավ: Ստեղծված պայմաններն առավել շահեկան և նպաստավոր դարձան Բագրատունիների համար, որոնք քաղաքական ասպարեզում մնացին առանց իրենց նախկին մրցակիցներ Մամիկոնյանների: Այս երկու իշխանական տները, երկար ժամանակ հակամարտության մեջ գտնվելով, վիճարկում էին Հայաստանում գերիշխողի դիրքը: Այդ մրցակցությունը սուր բնույթ ստացավ հայոց իշխան Աշոտ Կույրի կառավարման շրջանում (732-749) և իր տրամաբանական ավարտին հասավ 774-775 թթ. ապստամբությունից հետո, երբ Արձնիի ճակատամարտում զոհվեց Մուշեղ Մամիկոնյանը: Այս դեպքերից հետո Մամիկոնյանները, չկարողանալով վերականգնել իրենց նախկին ուժն ու հզորությունը, փաստորեն հեռացան քաղաքական ասպարեզից: Ճակատամարտից հետո, ինչպես վկայում է Վարդան վարդապետը, «...Մուշեղայ՝ երկու որդիք և չորս դստերք. անդրանկին Շապուհ անուն: Որք անկան յերկիրն Վասպուրական՝ զորս եսպան զերկոսին Մեհրուժան Արծրունի, որպես թէ՛ ՚ի պատճառս հորն նոցա եղև աղէտն մեծ. և մի ՚ի քերց նոցա ետ զինքն յամուսնութիւն Ջահապի ունեմն իսմայելացւոյ՝ թիկունս առնելով զնա»¹: Հաջորդ տողերում պատմիչը գրում է. «... Ջահապ յափշտակեալ էր մասն ինչ յԱրշարունեաց, և խորիէր տիրել ՚ի ձեռն կնոջն բոլոր աշխարհին...»²: Մեզ համար սույն հիշատակությունը հետաքրքրական է մի քանի առումներով. առաջին՝ ո՞վ էր վերը հիշատակված Ջահապը, երկրորդ՝ արդյոք նրա հետ ամուսնացած հայ իշխանական տան օրիորդը սերում էր Մամիկոնյանների՞ց, երրորդ՝ Արշարունիք գավառը ե՞րբ կարող էր դառնալ Բագրատունիների տիրույթ, չորրորդ՝ առանձնակի քննության անհրաժեշտություն ունի պատմիչի «բոլոր աշխարհին» արտահայտությունը: Վարդան պատմիչի երկասիրության մեջ Ջահապը առաջին անգամ հիշատակված է, ինչպես նշեցինք, 775 թ. դեպքերից անմիջապես հետո: Հաջորդիվ պատմիչը հաղորդում է, որ նա, ապստամբելով իր իշխանի³ դեմ, որդու՝ Աբղլայի հետ հաստատվում է Դվինում: Այս ամենն առաջ է բերում Վրկանա Բագրատունյաց ճյուղի հիմնադիր Վասակ Բագրատունու թոռ Ա-

¹ «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», լուսաբանեալ աշխատասիրութեամբ Ղ. Ալիշանի (այսուհետև՝ **Վարդան վարդապետ**, նշվ. աշխ.), Վենետիկ, 1862, էջ 76:

² Նույն տեղում:

³ Կարծում ենք՝ պատմիչը «իր իշխան» արտահայտությամբ նկատի է ունեցել Արմինիայի արաբ կառավարիչ Իսա իբն Մուհամմադին (820-823):

շոտ կուրապաղատի անհանգստությունը, ուստի վերահաս վտանգը չեզոքացնելու նպատակով դիմում է բյուզանդական կայսեր օգնությանը: Կայսրը, սակայն, զբաղված լինելով ներքին քաղաքական խառնակ իրադրությամբ, Աշոտին աջակցություն չի ցուցաբերում⁴: Վարդան պատմիչը Բյուզանդիայում տիրող քաղաքական դեպքերը նկարագրելիս որպես կայսր հիշատակում է Լևոնին, ապա պատմում է ոմն Միքայելի կողմից նրա նկատմամբ սպանության փորձ կատարելու, ապա Լևոնին սպանելու և նրա փոխարեն Միքայելի՝ կայսր դառնալու մասին: Դեպքերի նկարագրությունը մեզ հուշում է, որ խոսքն այստեղ վերաբերում է Բյուզանդիայի Լևոն V Յայագն (813-820) կայսրին, իսկ նրան սպանող ոմն Միքայել ոչ այլ ոք է, քան Լևոն V-ին հաջորդած Միքայել II Թլվատը (820-829): Վարդան վարդապետի տեղեկություններից պարզվում է, որ Աշոտ կուրապաղատը Լևոն կայսրից պետք է աջակցություն խնդրած լիներ նրա կառավարման վերջին տարում, քանի որ դրանից անմիջապես հետո պատմիչը նկարագրում է կայսեր սպանությունը, ապա Միքայել Թլվատի գահակալությունը: Փաստորեն, նույն ժամանակով պետք է թվագրել նաև Ջահապի՝ «իր իշխանի» դեմ ապստամբությունը:

Հետաքրքրական է, որ սույն ժամանակաշրջանին վերաբերող արաբական աղբյուրի համաձայն՝ Մամուն խալիֆայի (813-833) կողմից Հայաստանի և Ատրպատականի կառավարիչ նշանակված Իսա իբն Մուհամմադի Հայաստան գալու ժամանակ նրա դեմ ապստամբում է ոմն Սավադա իբն Աբդուլհամիդ ալ Ջահհաֆի: Իսան առաջարկում է նրան դառնալ Հայաստանի կառավարիչ, բայց Սավադան (Սևադան) մերժում է՝ փոխարենը պատերազմելով նրա դեմ: Աղբյուրների հաղորդմամբ՝ Իսայից մեծ ջանքեր պահանջվեցին այդ ապստամբությունը ճնշելու համար⁵:

Սևադայի բարձրացրած ապստամբության ժամանակը ճշգրտվում է Իսա իբն Մուհամմադի կառավարման տարիներով՝ 820-823 թթ.⁶: Այսինքն՝ ապստամբությունը 823 թ. պետք է արդեն ավարտված լիներ, քանզի այն ճնշվել էր Իսայի կողմից:

Մեր կարծիքով, արաբ պատմիչի սույն հիշատակությունն ըստ էության վերաբերում է Ջահապի բարձրացրած ապստամբության մասին Վարդան վարդապետի վերը բերված հիշատակություններին, քանզի թե՛ Վարդան վարդապետը և թե՛ Յակուբի պատմիչը, խոսելով արաբ իշխանի դեմ տեղի ունեցած ապստամբության մասին, նկատի ունեն պատմական նույն իրադարձություններն ու գործիչներին: Տարբերությունը միայն այն է, որ Յակուբիի մոտ հանդիպում ենք Սևադայի անվան ամբողջական հիշատակությանը՝ Սավադա իբն Աբդուլհամիդ ալ Ջահհաֆի, իսկ Վարդան վարդապետը նրան հիշում է լոկ Ջահապ անունով՝ հավանաբար նկատի ունենալով նրա ազգանունը կամ Ջահհաֆյանների ցեղից սերելը:

Հայկական աղբյուրներում Սևադա-Ջահապի վերաբերյալ հիշատակություններ կան նաև Հովհաննես Դրասխանակերտցու աշխատության մեջ⁷: Պատմագիտության մեջ ընդունված տեսակետի համաձայն՝ Դրաս-

⁴ Տե՛ս **Վարդան վարդապետ**, նշվ. աշխ., էջ 77:

⁵ Տե՛ս «Из сочинений Я‘куби». История. Баку, 1927, էջ 14:

⁶ Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արմինիայի ոստիկանների ժամանակագրությունը, հոդվածների ժողովածու, Եր., 2003, էջ 393:

⁷ Տե՛ս «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցույ Պատմութիւն Հայոց» (այսուհետև՝ **Հովհաննես Դրասխանակերտցի**, նշվ. աշխ.), Թիֆլիս, 1912, էջ 113:

խանակերտոցու հիշատակած Սևադան ազգակցական կապ ունեւր Ջահապի հետ. նրա եղբոր որդին էր⁸: Լեոն իր այս ենթադրությունը փաստում է՝ վկայակոչելով Վարդան Բարձրբերդցուն և արաբ պատմիչ Յակուբիին⁹: Սակայն Լեոնի կողմից հիշյալ պատմիչներին վերագրվող հիշատակությունները հավաստի չեն¹⁰:

Յովհաննես Դրասխանակերտցին Սևադայի վերաբերյալ հիշատակություններ է կատարում Դավիթ Կակաղեցի կաթողիկոսի կառավարման շրջանում (806-833): Պատմիչի վկայության համաձայն՝ «... Սևադայ ոմն անուն ի՛ Պարսիկ տոհմէ, - որ առեալ էր իւր կին զԱրուսեակ ՚ի Բագրատունի տանէ և ՚ի ձեռն այնորիկ գյուղով մասն երկրիս բռնակալեալ սեպիականաբար իմն տիրէր...»¹¹: Այնուհետև պատմիչը տեղեկացնում է Արմինիայի արաբ կառավարիչ Յուլի դեմ Սևադայի բարձրացրած ապստամբության մասին¹²:

Ըստ Յ. Ութնազյանի՝ հայ պատմագրության մեջ հանդիպող կայսիկ Սևադային Իսա իբն Մուհամմադի դեմ ապստամբություն բարձրացրած Սևադա իբն Աբդուլհամիդ ալ Ջահաֆիի հետ նույնացնելը հետևանք է Յ. Մարկվարտի այն սխալմունքի, որ Յուլը և Իսա իբն Մուհամմադը միևնույն անձն են¹³: Սակայն Մարկվարտի աշխատության Յ. Ութնազյանի մատնանշած էջում բացակայում է նրան վերագրվող ենթադրությունը: Ավելին, Յ. Մարկվարտը բացառում է Յուլի և Իսայի նույնացումը՝ նշելով, որ «Ասոր հետ (նկատի ունի Իսային - Մ. Գ.) կարելի չէ նույնացնել Յալ ոստիկանը...»¹⁴: Չնայած սրան՝ Յ. Ութնազյանը իրավացի է այն հարցում, որ Յուլի դեմ բարձրացված ապստամբությունը չէր կարող 820-821 թթ. տեղի ունեցած լինել, քանի որ ապստամբության մասնակիցների թվում հիշվում է նաև Սմբատ Բագրատունին, որը հայոց սպարապետ դարձավ հոր՝ Աշոտ Մասկերի մահվանից հետո՝ 826 թ.: Յուլին նույնացնելով Արմինիայի կառավարիչ Խալիդ իբն Եգիդի հետ՝ վերջինիս դեմ Սևադայի բարձրացրած ապստամբությունը Յ. Ութնազյանը թվագրում է 831-832 թթ., քանի որ, նրա կարծիքով, Խալիդ իբն Եգիդը Յասստան էր եկել հենց այդ ժամանակ¹⁵: Ա. Տեր-Ղևոնդյանը ևս, նույնացնելով հայկական աղբյուրներում հանդիպող Յուլին և Շայբանի Խալիդ իբն Եգիդ իբն Մազյադին¹⁶, վերջինիս կառավարումը թվագրում է 829-832 թթ.¹⁷: Յետևաբար՝ Յուլի դեմ Սևադայի բարձրացրած ապստամբությունը,

⁸ Տե՛ս Լեոն, Երկերի ժողովածու, հ. 2, Եր., 1967, էջ 412, ճնթ. 4, հմմտ. «Յայ ժողովրդի պատմություն», հ. II, Եր., 1984, էջ 350:

⁹ Տե՛ս նույն տեղը:

¹⁰ Տե՛ս բնագիրը՝ «Մեծին Վարդանայ Բարձրբերդեցոյ Պատմութիւն տիեզերական», ի լոյս ընծայեաց Սկրտիչ Էմին, Մոսկվա, 1861, էջ 108, նաև՝ «Արաբացի մատենագրեր Յասստանի մասին», Եաթուբի, թարգմ. Բ. Խալաթեանցի, «Յանդէս ամսօրեայ», Վիեննա, 1907, թիւ 5-6, էջ 140:

¹¹ Յովհաննես Դրասխանակերտցի, նշվ. աշխ., էջ 113:

¹² Տե՛ս նույն տեղը:

¹³ Տե՛ս Յ. Ութնազյան, Սյունիքը IX-X դարերում, Եր., 1958, էջ 58:

¹⁴ Յ. Մարկվարտ, Վրական Բագրատունեաց ծագումը, գերմաներէնէ թարգմանեց Յ. Յայրոզեան, Վիեննա, 1913, էջ 49:

¹⁵ Տե՛ս Յ. Ութնազյան, նշվ. աշխ., էջ 59-61:

¹⁶ Տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Յասստանում, Եր., 1965, էջ 76:

¹⁷ Տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան, Արմինիայի ոստիկանների ժամանակագրությունը, էջ 394: Ի դեպ՝ այստեղ Շայբանի Խալիդ իբն Եգիդ իբն Մազիադի փոխարեն նշվում է Խալիդ իբն Յագիդ իբն Մագիադ ալ Շայբանի:

ամենայն հավանականությամբ, տեղի էր ունեցել ոչ թե 830-831 թթ., այլ 829-832 թթ. ընկած ժամանակահատվածում:

Ավելին, Վարդան պատմիչի հիշատակություններից պարզ է դառնում, որ Սևադան պետք է ավելի վաղ՝ 829 թ. առաջ, հաստատված լիներ Հայաստանում, քանի որ մինչ Հուլի կառավարումը նա պատերազմել էր Բագրատունիներից Շապուհ Բագրատունու և Աշոտ Մսակերի հետ: Այս ենթադրության օգտին է խոսում նաև այն փաստը, որ Հուլի և Սևադայի միջև բախումից առաջ Սևադան արդեն ամուսնացած էր Արուսյակ Բագրատունու հետ:

Ջահապին և Սևադային վերաբերող հաջորդ նույնությունը նրանց երկուսի՝ ազգությամբ հայ կնոջ հետ ամուսնացած լինելու իրողությունն է: Ըստ Վարդան պատմիչի՝ Ջահապի կինը Մուշեղ Մամիկոնյանի դուստրն էր, իսկ Հովհաննես Դրասխանակերտցու վկայությամբ՝ Սևադան ամուսնացած էր Արուսյակ Բագրատունու հետ: Ժամանակագրական առումով սույն դեպքերին ավելի մոտ է կանգնած Հովհաննես Դրասխանակերտցին, իսկ դա նշանակում է, որ նրա տեղեկությունները պետք է լինեն ավելի արժանահավատ: Բացի այդ, հետաքրքրական է նաև երկու պատմիչների վկայություններում հանդիպող մեկ այլ կարևոր հանգամանք ևս. կնոջ ունեցած իրավունքով նրա տոհմական տիրույթներին տեր դառնալու պարագան, որը նկատվում է թե՛ Ջահապի և թե՛ Սևադայի դեպքում:

Ջահապի (Սևադայի) ամուսնության վերաբերյալ հայագիտության մեջ առաջին անգամ հետաքրքրական տեսակետ է առաջ քաշել Մ. Օրմանյանը, որի համաձայն՝ Ջահապի հետ ամուսնացած հայ օրիորդը ոչ թե Մուշեղ Մամիկոնյանի դուստրն էր, այլ Աշոտ Մսակերի և Շապուհ Բագրատունու քույր Արուսյակ Բագրատունին¹⁸: Վերոհիշյալ տեսակետը կիսում է նաև Ա. Ալպոյաճյանը¹⁹: Սակայն Մ. Օրմանյանի այս կարծիքը չպաշտպանվեց Ն. Ադոնցի և Ն. Ակինյանի կողմից: Նրանք կասկածի տակ չդրեցին և չվիճարկեցին Ջահապի կնոջ Մամիկոնյան լինելը, իսկ նրանց ամուսնությունը արժանացավ տարբեր մեկնաբանությունների: Ն. Ադոնցը այն համարում է «ողբերգություն Մամիկոնյանների մարող տան մեջ»²⁰, իսկ Ն. Ակինյանը՝ «...իբրև փորձ զերծ պահել հայրական (Մամիկոնյանների - Մ. Գ.) կալուածքները Բագրատունիներից»²¹:

Մ. Օրմանյանի հետաքրքրական տեսակետի խորքային ուսումնասիրությունը մեզ ստիպեց մանրազնին քննել նախ Վարդան պատմիչի սույն հիշատակությունը. «...և զի Ջահապ յափշտակեալ էր մասն ինչ յԱրշարունեաց, և խորհէր տիրել ՚ի ձեռն կնոջն բոլոր աշխարհին...»²²: Խնդրին անդրադարձած Ա. Եղիազարյանը մերժում է Ջահապի՝ հավանական ամուսնությունը Բագրատունի օրիորդի հետ՝ ենթադրելով, որ Ջահապը, ա-

¹⁸ Տե՛ս Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա., Եր., 2001, էջ 1058:

¹⁹ Տե՛ս Ա. Ալպոյաճեան, Պատմական Հայաստանի սահմանները, Կահիրե, 1950, էջ 181:

²⁰ Ն. Ադոնց, Բագրատունեաց փառքը, Երկեր, հ. Ա., Եր., 2006, էջ 441:

²¹ Ն. Ակինյան, Ղևոնդ երեց և Մովսես Խորենացի, «Մատենագրական հետազոտություններ», հ. Գ, Վիեննա, 1930, էջ 247:

²² Վարդան վարդապետ, նշվ. աշխ., էջ 76:

մուսնանալով Մուշեղ Մամիկոնյանի դստեր հետ, ցանկանում էր այդպիսով տիրել Մամիկոնյանների ժառանգությանը²³՝ նկատի ունենալով պատմիչի «բոլոր աշխարհ» արտահայտությունը: Այսուհանդերձ նա գտնում է, որ 774-775 թթ. անմիջապես հետո Արշարունիքը դեռևս չէր անցել Բագրատունիներին, քանզի այն Կամսարականներից գնել էր Աշոտ Մասկեր Բագրատունին²⁴: Ըստ այսմ՝ կարծում ենք, որ այնքան էլ հիմնավորված չէ «բոլոր աշխարհ» կապակցությունը ընկալել որպես Մամիկոնյանների ժառանգություն: Պատճառն այն է, որ նրանք, 774-775 թթ. հետո դուրս գալով քաղաքական ասպարեզից, կորցրել էին իրենց սեփական տիրույթները: Յետևապես՝ IX դ. սկզբներին Դվինում հաստատված Ջահապ-Սևադան չէր կարող Մուշեղի դստեր հետ ամուսնությամբ հավակնություններ ցուցաբերել Մամիկոնյանների՝ վաղուց ի վեր կորցրած տիրույթների նկատմամբ: Բացի այդ, Արշարունիք գավառը կամ դրա մի մասը, հակառակ Ն. Ադոնցի այն տեսակետի, որ «Արշարունիքի մի մասը Արտագերս ամրոցով պատկանում էր Մամիկոնյաններին»²⁵, մինչև 785 թ. և դրանից հետո չի պատկանել Մամիկոնյաններին: Արշարունիքի մի մասի՝ Արտագերս ամրոցով Մամիկոնյաններին պատկանելու մասին Ն. Ադոնցի պնդման համար, կարծում ենք, հիմք է ծառայել Ղևոնդ պատմիչի՝ 774 թ. Կունայրիի դեպքերին հաջորդած Մուշեղ Մամիկոնյանի գլխավորած շարժման նկարագրությունը: Համաձայն այդ հիշատակության՝ «... ի բաց եկաց ի հնազանդութենէ Իսմայելի. և գտեալ զոմանս յորդոցն Իսմայելի. և ի գաւառի իւրում՝ և ի տան իւրում, ... Եվ ինքն (Մուշեղ Մամիկոնյանը - Ս. Գ) գաղթէր յամրոցն Արտագերոյ հանդերձ տամբ իւրով»²⁶: Կարծում ենք՝ ասվածից ամենևին չի հետևում, որ գավառը կամ ամրոցը նշված ժամանակաշրջանում պատկանում էր Մամիկոնյաններին, քանզի պատմիչը որևէ կերպ չի հստակեցնում «ի գաւառի իւրում» կամ «ի տան իւրում» կապակցությունները և որոշակիորեն ոչինչ չի հիշատակում Արտագերսի՝ Մամիկոնյաններին պատկանալու մասին: Ավելին, Մամիկոնյանները մշտապես Կամսարականների հետ ունեցել են բարիդրացիական հարաբերություններ, հետևապես՝ հարկ եղած ժամանակ կարող էին ապաստանել նրանց տիրույթներում: Բացի այդ, հայկական աղբյուրները Արշարունիքի կամ դրա որևէ մի մասի՝ VIII դարում Մամիկոնյաններին պատկանելու վերաբերյալ լռում են: Հակառակ դրան՝ Կամսարականները մինչև 785 թ. հանդես էին գալիս որպես Շիրակի և Արշարունիքի տերեր²⁷: Յետևապես՝ Ջահապ-Սևադայի կինը պետք լիներ Արշարունիքին տիրող իշխանական տոհմից՝ այս դեպքում Բագրատունիներից, որպեսզի նրա ունեցած ժառանգական իրավունքով գավառն անցներ ամուսնուն:

²³ Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը, Եր., 2010, էջ 158-159:

²⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 159:

²⁵ **Ն. Ադոնց**, նշվ. աշխ., էջ 448:

²⁶ «Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծի վարդապետի հայոց», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 139:

²⁷ Այս մասին մանրամասն տե՛ս **Ա. Կոզեան**, Տիարք Շիրակայ եւ Արշարունեաց, Վիեննա, 1926, էջ 169-171:

Իսկ ում կարող էր պատկանել Արշարունիքը նշված ժամանակշրջանում:

Շիրակի և Արշարունիքի մշտական տերերը՝ Կամսարականները, քաղաքական ասպարեզից հեռացան 785 թ.՝ Ներսեհ Կամսարականի մահվանից հետո: Յետևաբար, դրանից հետո զավառն իր երբեմնի տերերին պատկանել չէր կարող: Արշարունիքի հաջորդ հավանական տեր Ջահապ-Սևադան Չայաստանում հաստատվեց, ինչպես նշեցինք, IX դարի սկզբին. այսինքն՝ Ներսեհ Կամսարականի մահվանից հետո զավառը չէր կարող նրան անցած լինել: Ուստի՝ Արշարունիքի միակ հավանական տերերը պետք է Բագրատունիները լինեին: Չայտնի է, որ վերջիններս նշված ժամանակաշրջանում վարում էին քաղաքական ասպարեզից հեռացած իշխանական տների տիրույթները յուրացնելու քաղաքականություն: Կամսարականներին պատկանող Արշարունիքը բացառություն լինել չէր կարող, առավել ևս, որ դրա նկատմամբ Բագրատունիներն ունեին բացահայտ հավակնություններ, որոնք անուղղակի հաստատվում են Աշոտ Մսակերի կողմից Արշարունիքի գնման մասին Ասողիկի հաղորդած հետևյալ տեղեկությամբ. «Սա (Աշոտ Մսակերը - Մ. Գ.) գանձագին արար զգաւառն Արշարունեաց յազգէն Կամսարականաց, և զարքունիսն ի Կոզովտէ յԱրշարունիս փոխեաց»²⁸: Փաստորեն, պատմիչը վկայում է Աշոտ Մսակերի կողմից ողջ զավառի, այլ ոչ թե դրա մի մասի գնման մասին: Ինչ վերաբերում է այս իրողության թվականին, ապա ինչպես Ասողիկը, այնպես էլ հայկական մյուս աղբյուրները, ցավոք, լռում են: Սակայն հայտնի է, որ Աշոտ Մսակերը այն գնել էր Կամսարականներից՝ ամենայն հավանականությամբ՝ Ներսեհ Կամսարականի ժառանգներից 785 թ. կամ դրանից հետո:

Այս ամենից ակնհայտ է դառնում, որ զավառի նկատմամբ ժառանգական իրավունք կարող էր ունենալ միայն Բագրատունի իշխանական տան կանանցից որևէ մեկը՝ տվյալ դեպքում Ջահապ-Սևադայի կին Արուսյակ Բագրատունին:

Նշված ժամանակաշրջանում, ի տարբերություն Մամիկոնյանների, Բագրատունիները Արաքական խալիֆայության նկատմամբ վարում էին զգուշավոր քաղաքականություն, ինչը պահանջում էր հարկ եղած դեպքում՝ քաղաքական շահերի թելադրանքով, արաբների հետ հաստատել բարիդրացիական հարաբերություններ, որոնք հաճախ ամրապնդվում էին խնամիական կապերով: Ասվածի ապացույցն է Ջահապ-Սևադայի և Արուսյակ Բագրատունու ամուսնությունը:

Այսպիսով, վերը շարադրվածը հիմք է տալիս ենթադրելու, որ IX դարասկզբին Արշարունիքը չէր կարող պատկանել VIII դարի վերջերին իրենց տիրույթները կորցրած և պատմության թատերաբեմից վերացած Մամիկոնյաններին: Այն 785 թ. կամ դրանից հետո Կամսարականներից անմիջապես անցել է Բագրատունիներին՝ գնման ճանապարհով:

²⁸ «Ստեփանոսի Տարոնեցոյ Ասողկան, Պատմութիւն տիեզերական», հրատ. Ստ. Մալխասեանց, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 106:

МАРИАМ ГРИГОРЯН – *О владельцах области Аршаруник в начале IX века.* – В статье обосновывается мнение, согласно которому Джаап, упомянутый историком Варданом, идентичен Севаде ибн Абдулхамиду аль Джаххафи, которого мельком называл историк Якуб. Имя Севады фигурирует и в труде Иованнеса Драсханакертци. Там говорится, что Севада был женат на Арусяк Багратуни. Что же касается области Аршаруник, то в статье утверждается, что она перешла от Камсараканов к Багратуни: последние приобрели её у первых.

MARIAM GRIGORIAN – *About the Owners of the Province Arsharuniq Early in the IX c.* – As a result of the investigation carried out within the scope of the present study the author comes to the following conclusions. Jahap mentioned by historian Vardan is the same Savada ibn -Abdulhamid al-Jahhafi mentioned by the Arab historian Yakubi. Sevada was also mentioned in the work of historian Hovhannes Draskhanakerttsi. According to these witnesses Sevada was married to Arusyak Bagratuni. As to Arsharuniq, the author assures that it was passed from the Kamsarakans to the Bagratunis through purchase.